




Երուսաղեմի Սուրբ Յարութեան եկեղեցին :

„ Կրօնաւորներն իրենց երգեհոնը՝ ե.
 „ Թովպացի քահանաներն ալ իրենց
 „ նուագարանները ստէպ կը զարնեն.
 „ մէկ դին կը լսես եկեղեցւոյն մէջ
 „ յոյն կրօնաւորներուն անոյշ երգե-
 „ ըր, մէկալ դինն Հայոց վարդապետ
 „ ներուն ժամերգութիւնը, ու զփոփ
 „ կրօնաւորներուն ողբաձայն երգե-
 „ ըր, երբեմն առանձին՝ երբեմն ալ
 „ ամէնը մէկտեղ „ :

Եկեղեցւոյն ձևը կըրօ է . երկայ-
 նութիւնը գրեթէ հարիւր քայլ է ,
 լայնքը վաթսուն . տեսքը շատ հոյա-
 կապ ու փառաւոր : Վրիստոսի սուրբ
 Վերեզմանը եկեղեցւոյն մէջտեղն է՝
 երկայնաձև քարաշէն շինուածքով մը
 ծածկած . անոր մէջը կ'իջնան ուխ-
 տաւորները երկու իրեք աստիճանով ,
 ու հոն երկրպագութիւն կ'ընեն սուրբ
 գերեզմանին , որ ճերմակ մարմարիո-
 նէ է՝ վեց ոտնաչափ երկայն ու իրեք
 ոտնաչափ լայն . վրան ալ գմբէթաձև
 ծածքէն երեսունուեօթը հատ մեծա-
 շէն ու Թանկագին կանթեղներ կա-
 խուած են որ գիշեր ու ցորեկ կը վա-
 ռին . ասոնք Եւրոպայի այլևայլ Թա-

զաւորաց ընծաներն են : Ըայց անոնց
 մէ աւելի լուսաւոր կ'երևնայ բարե-
 պաշտ ուխտաւորին ան ամէն ազգէ
 հոն վազող քրիստոնէից աստուած-
 պաշտութիւնն ու հաւատքը , որ ծոն-
 կի վրայ եկած՝ կամ երեսի վրայ փը-
 ռուած՝ իրենց արցունքովը կը լուս-
 նան այսչափ դարերէ՝ ի վեր Վրիստո-
 սի փրկչին մերոյ սուրբ գերեզմանը ,
 և ինչպէս որ Վրիստոս ան գերեզմա-
 նէն յարեալ փառաւորապէս , այնպէս
 ալ իրենք կը յուսան օր մը իրենց
 գերեզմանէն յարութի առնելու փա-
 ռաւորապէս ու իրենց փրկչին աջ-
 կողմը դասաւորուելու :



ԱՐՏԱՍՈՒՔ անգամ ապաշխարութեան առաւ-
 լազոյն ունին քաղցրութիւն քան զմեզն որ քամե
 զնոսին յաչաց : Ի սիրտ ճշմարիտ քրիստոնէին հա-
 նապազորդ իրախճանութիւն է :

